



http://cfoa.am

Համայնք-ՀամաՏեղ



http://celog.am

ՀամաՏեղ ծրագրի պաշտոնաթերթ Official Newspaper of CELoG program

Ֆրատարակվում է 2003 թվականից

Օգոստոս 2017, թիվ 8(108)

Խմբագրական

ՉԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Հանրային կառավարման բնագավառում պլանավորման գործընթացներին տրվող կարևորությունը ամենեւին ինքնանպատակ չէ: Ծիշտ եւ գրագետ կերպով իրականացված պլանավորումը կառավարման օղակների համար անփոխարինելի միջոց է՝ ապագայում նախանշելու զարգացման ուղղությունները եւ դրանց հասնելու համար իրականացվող գործողությունների հաջողականությունը: Այդ իսկ պատճառով պլանավորումը չի կարելի համարել կառավարման գործառնություններից ամենադժվարը, եւ վերջինիս պատշաճ իրականացումը որոշակի ռեսուրսներ է պահանջում՝ այդ թվում մարդկային եւ ժամանակային:

Տեղական ինքնակառավարման մակարդակում միջնաժամկետ պլանավորման միջոց է համայնքի զարգացման ռազմավարության մշակումը, որը նպատակ է հետապնդում առաջիկա մի քանի տարիների համար նախանշել տվյալ համայնքի առաջընթացի ուղիները: Հայաստանում այն իրականացվում է համայնքի զարգացման ծրագիր կազմելով:

ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի ավելի քան 20 տարվա պատմության ընթացքում համայնքի զարգացման ծրագրի մշակման կարելությունը մշտապես արտացոլվել է օրենսդրության մեջ: Այնուամենայնիվ, երբ հերթը հասել է ծրագիրը կազմելուն, առաջ են եկել որոշակի դժվարություններ, շատ դեպքերում՝ համայնքների համար անհաղթահարելի: Բավական է նշել, որ համայնքների համար զարգացման ծրագրերի մշակման մեթոդաբանություն պետական լիազոր մարմնի կողմից տրամադրվել է միայն վերջին տարիներին, իսկ մինչեւ այդ համայնքներն իրենց զարգացման ծրագրերը կազմել են տարբեր դասընթացների շրջանակներում ստացած գիտելիքների ու հմտությունների շնորհիվ:

Մեթոդապես թույլ կազմված ծրագիրը, մշակման աշխատանքներում բնակիչների մասնակցությունը չապահովելը, ծրագիրը դարակում պահելը եւ դրա իրագործումը չկարելությունը հանգեցրել են նրան, որ համայնքի զարգացման ծրագրի նշանակության նկատմամբ որոշակի անվստահություն ու անտարբերություն է առաջացել, եւ այս ձեւավորված կարծրատիպը առայժմ դժվար է հաղթահարվում:

Օրենսդրորեն կապված լինելով համայնքի ղեկավարի պաշտոնավարման ժամանակահատվածի հետ՝ զարգացման ծրագիրը դիտվում է որպես վերջինիս նախընտրական խոստումների իրականացման յուրօրինակ փաստաթուղթ: Հայաստանում համայնքի ղեկավարի պաշտոնավարման ժամկետը ՀՀ Սահմանադրությամբ սահմանվել է երեք անգամ՝ սկզբում 3 տարի, այնուհետեւ՝ 4 եւ վերջում՝ 5: Եթե սկզբնական ժամանակահատվածում զարգացման ծրագիրը կազմվում էր 3 տարվա կտրվածքով՝ պարունակելով կանխատեսումների որոշակի իրատեսականություն, ապա այժմ, 5 տարի առաջ կանխատեսումներ իրականացնելիս, համայնքային իշխանությունները օբյեկտիվ դժվարություններ են ունենում, իսկ այդ կանխատեսումներն էլ հիմնականում իրական կյանքից հեռու են լինում: Ավելին, վերջին տարիների փորձը ցույց տվեց, որ 5 տարվա համար զարգացման ծրագրի մշակումը բավականին աշխատատար եւ ծախսատար գործ է, իսկ արդեն կազմված ծրագիրը խիստ ծավալուն է ստացվում, հատկապես, եթե հաշվի առնենք, որ նույն օրենքով սահմանված կարգով վերջինս պետք է ներառի մի քանի պարտադիր բաղադրիչներ, ինչպիսիք են, օրինակ, համայնքային անշարժ գույքի եւ հողերի կառավարման ծրագիրը՝ հնգամյա եւ տարեկան կտրվածքներով եւ այլն: Եթե դրան գումարները նաեւ այն իրողությունը, որ Հայաստանում սկսվել է ընթացքի մեջ են վարչատարածքային բարեփոխումները, որոնց արդյունքում համայնքները խոշորանում, եւ ձեւավորվում են բազմաբնակավայր համայնքներ, ապա պատկերն ավելի է ամբողջանում:

Համաձայն պետական լիազոր մարմնի կողմից ներկայացված մեթոդաբանությունների եւ մեթոդական ցուցումների՝ առաջարկվում է համայնքի զարգացման ծրագրում ներառել ոլորտային զարգացման ծրագրեր՝ որոշակի ձեւաչափերով, որոնք ներառում են ծրագրի նպատակը, խնդիրները, իրականացվող միջոցառումները, ստացվող արդյունքները, արժեքի հաշվարկումը եւ այլն:

Ինչպես կարելի է նկատել, նախանշվող ոլորտային ծրագրերի մշակումը եւ նման կառուցվածքով ներառումը համայնքի զարգացման ծրագրերում արդեն իսկ բարդացնում է այն կազմելու գործընթացը: Փորձը ցույց է տալիս, որ համայնքներից շատերում դժվարանում են զարգացման ծրագրի մշակման հետք այս փուլում: Բացի այդ, չպետք է մոռանալ, որ հնգամյա զարգացման ծրագիրն իրենից ներկայացնում է համայնքի զարգացման միջնաժամկետ ռազմավարական պլան, որի կառուցվածքում ամենեւին անհրաժեշտ չէ նախանշված ժամկետում իրականացվող միջոցառումների ու գործողությունների մանրամասն ներկայացում, ինչը պահանջվում է առաջարկված մեթոդաբանություններով եւ մեթոդական ցուցումներով: Ահա սա է հիմնական պատճառը, որ համայնքի զարգացման ծրագիրը չի կատարում իր հիմնական առաքելությունը, այն է՝ սահմանել համայնքի ռազմավարական այն նպատակները, որոնց ցանկանում է հասնել համայնքը առաջիկա հինգ տարում, եւ այդ նպատակներին հասնելու ռազմավարությունները:

էջ 2 →

ԻՆՉՊԵՐՍ ԱԶԱՏՎԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՏ ՂԵԿԱՎԱՐԻՑ



Պավել Սվիստիչ,
ՀամաՏեղ ծրագրի միջազգային փորձագետ

Տեղական ինքնակառավարման բարեփոխումների հետ կապված հարցերից մեկը, որը վերջերս Հայաստանում քննարկման էր դրվել, համայնքի ղեկավարին՝ իր լիազորությունների ավարտից առաջ պաշտոնանկ անելն էր:

ՀՀ կենտրոնական իշխանություններն իրականացնում են երկարաժամկետ հեռանկարում ընտրական համակարգը փոփոխելու ծրագիր, որի համաձայն՝ համայնքի ղեկավարը ընտրվում է ավագանու կազմից, ինչպես ներկայումս արվում է Երեւանում, Գյումրիում եւ Վանաձորում (այդպես է նաեւ եվրոպական մի շարք երկրներում): Այս դեպքում ծրագիրը թույլ է տալիս պաշտոնանկ անել համայնքի ղեկավարին, եթե նա լավ չի իրականացնում իր լիազորությունները: Սա, իհարկե, ընդունելի քաղաքական մեխանիզմ է, որը գործում է մի շարք եվրոպական երկրներում (տես աղյուսակը): Սակայն ես ցանկանում եմ մի նկատառում անել. տեղական իշխանության կայունությունը ինքնին արժեք է: Կայուն տեղական իշխանության շնորհիվ համայնքի զարգացման ծրագրերն ավելի լավ է հնարավոր իրականացնել, քան համայնքի ղեկավարների հաճախակի փոփոխության դեպքում: Սա է պատճառը, որ մի շարք երկրներում համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու գործընթացն ավելի դժվար է, քան ավագանու «հասարակ» որոշումը:

էջ 3 →

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում» լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի ընդունումը նախագծի հեղինակները պայմանավորում են հանրապետությունում համայնքային թափոնների կառավարման ոլորտում աշխատանքների համակարգված եւ արդյունավետ իրականացման եւ ոլորտի գործառնությունների պետական կանոնակարգման անհրաժեշտությամբ: Նախագծի ընդունմամբ նրանք ակնկալում են բարելավել հանրապետության համայնքային թափոնների կառավարման որակը, ձեւավորել բնագավառում կայուն կառավարման համակարգ, նվազեցնել համայնքային թափոնների առաջացող բնակիչները եւ նպաստել դրանց բնապահպանորեն անվտանգ մշակման եւ վերաօգտագործման աճին, ապահովել հանրապետության բոլոր համայնքների ընդգրկումը համայնքային թափոնների կառավարման համակարգում, ինչպես նաեւ կատարելագործել ոլորտի նորմատիվատեխնիկական դաշտը ու ներդնել բնագավառում պետական կառավարման, վիճակագրական հաշվառման եւ մոնիտորինգի միասնական համակարգ:

Օրենքի նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման եւ զարգացման նախարարության աշխատակազմի կողմից:

Օրենքի նախագծի շուրջ առաջարկություններ կարելի է թողնել <https://www.e-draft.am/projects/382/about> կայքում:

էջ 6 →

← էջ 1

ՉԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԶԱՄԱՅՆՔԻ ՊԼԱՆԱԿՈՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Նշված իմաստային և գաղափարական հարցից բացի՝ կա եւս մեկ այլ կարեւոր հարց, որն առավել վառ է արտահայտվում, քան վերոգրյալը. խոսքը համայնքի զարգացման ծրագրի իրականացման ապահովումն է և դրա հիման վրա համայնքի տարեկան բյուջեի կազմումը: Առավել մեծ դժվարությունների համայնքային իշխանություններն ու աշխատակազմը հանդիպում են հենց այստեղ: Մի կողմից՝ համայնքի զարգացման ծրագրում առաջիկա տարիների գործողությունները «պահանջվում է» սահմանել ըստ ծրագրերի և միջոցառումների, մյուս կողմից՝ ունենք ծախսային սկզբունքով կազմվող բյուջե, որն իր կառուցվածքով և տրամաբանությամբ չի համապատասխանում պլանավորման ծրագրային մոտեցմանը: Այստեղ է, որ խզվում է համայնքի զարգացման ծրագրի և տարեկան բյուջեի տրամաբանական կապը և իրագործելիության փոխկապակցվածությունը:



արտացոլել համայնքի տարեկան բյուջեում և նպաստավոր պայմաններ ստեղծել՝ նախաշված ծրագրերը դարձնելու արդյունքահեն, իսկ իրականացման միջոցառումները՝ չափելի և վերահսկելի:

Այդպիսի գործիք կարող է հանդիսանալ համայնքի տարեկան աշխատանքային պլանը՝ ՏԱՊ-ը: Վերջինս կներառի համայնքի միջնաժամկետ զարգացման ծրագրով տվյալ տարվա համար նախատեսվող ծրագրերը և հստակ միջոցառումները՝ արտացոլելով դրանց իրականացման արժեքները և ֆինանսավորման աղբյուրները,

ակնկալվող արդյունքները և վերահսկողության մեխանիզմները: ՏԱՊ-ը, ի հակադրություն հնգամյա զարգացման ծրագրի, պետք է լինի գործուն աշխատանքային փաստաթուղթ, որը մշտապես դրված կլինի համայնքի ղեկավարի սեղանին, այլ ոչ թե կոռուզիայի կառավարակներից մեկում փոշոտվող թղթերի կապոց: Նման փաստաթղթի առկայության դեպքում համայնքի ֆինանսիստների համար առավել դյուրին կլինի տարեկան բյուջեի կազմումը և կառավարումը, քանի որ վերջինս ՏԱՊ-ում ներառված ծրագրերի ու միջոցառումների ֆինանսավորման հիմնական աղբյուրն է:

Միեւնույն ժամանակ, ՏԱՊ-ի ներդրումը տեղական ինքնակառավարման համակարգում կբերի նրան, որ համայնքների զարգացման ծրագրերը կդառնան սեղմ, հակիրճ և ավելի կիրառելի փաստաթուղթ՝ ծառայելով իրենց հիմնական առաքելությանը՝ համայնքի զարգացման տեսլականի, ուղղությունների, նպատակների և խթանների սահմանմանը: Ավելին, խնդրին ավելի առաջ նայելով, ՏԱՊ-ը հնարավորություն կտա համայնքներին առավել հեշտ անցում կատարել ծրագրային բյուջետավորմանը, ինչը եւս մտնում է կենտրոնական իշխանության մոտակա պլանների մեջ:

Ի լրումն այս ամենի, նշենք, որ Համայնքների ֆինանսիստների միավորման փորձագիտական թիմը, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերակցության (ԳՄՀԸ) օժանդակությամբ, սկսել է այս գործիքի մշակման աշխատանքները, և մոտ ժամանակներս այն հասանելի կդառնա համայնքներին և շահագրգիռ այլ կողմերի:

Վ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Վ. ՇԱՐԱՎՉՅԱՆ
Դ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
 Խմբագրական խորհրդի անդամներ

ԶԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԶԱՐՑ ԸՆԴՊՐԿԵԼՈՒ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱՐԿԸ ՏՐՎԵՑ

Ինչպես հայտնի է, սկսած 2013 թվականից՝ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի, համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությամբ կարող են հանդես գալ նաեւ համայնքի բնակիչները:



Օրենքով սահմանվում է, թե ովքեր կարող են մասնակցել այդ նախաձեռնության իրականացմանը, և ով պետք է այն ներկայացնի ավագանու նիստում, ինչպես նաեւ նշվում է, որ դրա քննարկման կարգը սահմանվում է ավագանու կանոնակարգով:

2015թ. Համայնքների ֆինանսիստների միավորումը (ՀՖՄ) ՀամաՏեղ ծրագրի շրջանակներում մշակել էր «Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգ», որը քննարկվել է հաստատվել է ՀամաՏեղ ծրագրի թիրախային 35 համայնքների ավագանիների կողմից:

Առաջնորդվելով օրենքի համապատասխան կետով և վերոնշյալ կարգով, ՀամաՏեղ ծրագիրը 2016թ. նախաձեռնեց և թիրախային 3 համայնքներում՝ Ալավերդի, Նոյեմբերյան և Սպիտակ քաղաքներում, կյանքի կոչեց համայնքի ավագանու նիստի օրակարգում բնակիչների կողմից հարց ընդգրկելու նախաձեռնություն կազմակերպելու և ՏԻՄ-երի քննարկմանը ներկայացնելու գործընթաց, որն, ի դեպ, մեր երկրում իրականացվում էր առաջին անգամ:

Կարեւորելով բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը, ինչպես նաեւ նմանօրինակ գործընթացի կազմակերպումը, ՀՖՄ փորձագիտական թիմի կողմից (թիմի անդամներ՝ Վահան Մովսիսյան, Վահրամ Շահբազյան, Վահե Սարգսյան, Դավիթ Մարգարյան, Աբրահամ Արտաշեսյան) 2017թ. մշակվեց և տպագրվեց «Համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնության կազմակերպման և իրականացման» ուղեցույց, որը մանրամասնորեն ներկայացվեց օգոստոսի 30-ին ՀՖՄ գրասենյակում կազմակերպված սեմինար-քննարկման ժամանակ: Հանդիպմանը մասնակցում էին նաեւ այս տարվա ընթացքում նման նախաձեռնության գործընթացի իրականացման համար նախապես անցկացված մրցույթում ընտրված փորձագետները՝ Արաքսյա Ավետյանը, Հասմիկ Գրիգորյանը և Սիփան Փաշինյանը:

Սեմինարի ընթացքում մրցույթում հաղթած փորձագետների կողմից բարձրացվեցին գործընթացի պատշաճ կազմակերպմանը և անցկացմանը վերաբերող մի շարք հարցեր, որոնց բանախոսների կողմից տրվեցին սպառնիչ պատասխաններ:

Համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությունը տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցության ձեռքից մեկն է: Նախաձեռնությունը համայնքային որեւէ հարց համայնքի ավագանու նիստի օրակարգում ընդգրկելու, ավագանու կողմից քննարկելու և դրա վերաբերյալ ավագանու որոշումը ստանալու բնակիչների նախաձեռնությունն է»,- հավելեց բանախոսը:



«Տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների մասնակցությունը կարող է տեղի ունենալ ՀՀ Սահմանադրությամբ և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ ՏԻՄ-երի իրավասությունների շրջանակներում, նրանց գործունեության

ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով, իսկ ընթացակարգը՝ տվյալ համայնքի ավագանու կողմից ընդունված՝ «Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգով»: Փորձագետը խոսեց նաեւ նախաձեռնող խմբի ձեւավորման, նախաձեռնության հարցի ընտրության և ձեւակերպման, բնակիչներից ստորագրահավաքի կազմակերպման մասին՝ շեշտադրելով այն հանգամանքը, որ համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնության համար կարող են ստորագրել համայնքում հաշվառված և 16 տարին լրացած յուրաքանչյուր անձ և միայն մեկ անգամ:

Վ. Սարգսյանը ներկայացրեց, թե ինչպես պետք է նախաձեռնության հարցի վերաբերյալ դիմում ներկայացվի համայնքի ղեկավարին, անդրադարձավ նաեւ նախաձեռնության հարցի քննարկման համար ավագանու նիստի հրավիրմանը, հարցի ներկայացմանը և նախաձեռնության վերաբերյալ համայնքի ավագանու որոշմանը և համայնքում կազմակերպված գործընթացի վերաբերյալ հաշվետվության կազմմանը:

Սեմինարի ընթացքում մրցույթում հաղթած փորձագետների կողմից բարձրացվեցին գործընթացի պատշաճ կազմակերպմանը և անցկացմանը վերաբերող մի շարք հարցեր, որոնց բանախոսների կողմից տրվեցին սպառնիչ պատասխաններ:

Համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությունը, որն այս տարի իրականացվելու է Վեդի, Դիլիջան և Եղեգնաձոր համայնքներում, մեկնարկեց սեպտեմբերի 1-ին: Դրանց ընթացքը և ստացված արդյունքները կլուսաբանվեն թերթի հաջորդ համարներում:

ՀԱՍՄԻԿ ԵՆՐՈՒՅԱՆ

ԻՆՉՊԵՐՍ ԱԶԱՏԿԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՏ ՂԵԿԱՎԱՐԻՑ

← էջ 1

Ներկայումս Լեհաստանում համայնքի ղեկավարին ընտրում են բնակիչները, եւ ավագանին նրան պաշտոնանկ անել չի կարող: Սակայն մինչեւ 2002թ. համայնքի ղեկավարին նշանակում էր ավագանին, ինչպես ներկայումս իրականացվում է վարչական շրջանների (powiat) ղեկավարների եւ մարզպետների դեպքում: 1990-ականներին Լեհաստանում ավագանու կողմից համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու գործընթացը չափազանց ոյուրին էր համարվում եւ տեղական իշխանությունների կայունությունն ապահովելու համար կանոնակարգերը փոխվեցին: Մասնավորապես իրենց ղեկավարներին պաշտոնանկ անելու ցանկություն ունեցող վարչական շրջանների կամ մարզային խորհուրդների համար գործում են հետեւյալ կանոնակարգերը.

- Ավագանու բոլոր անդամների 3/5-րդը պետք է աջակցի որոշմանը (ոչ թե խորհրդանշական մեծամասնությունը կամ ներկա անդամների 3/5-րդը, այլ կոնկրետ բոլոր անդամների 3/5-րդը)

- Գործադիրին պաշտոնանկ անելու որոշումը չի կարող քվեարկության դրվել առաջարկման նույն օրը: Առաջարկի եւ քվեարկության օրերի միջեւ նվազագույնը 14 օր պետք է լինի

- Եթե պաշտոնանկության քվեարկությունը ձայնողից է, եւ որոշում չի կայացվում, ապա հաջորդ որոշումը պետք է առաջարկվի ոչ շուտ, քան 6 ամիս հետո: Այսպիսի մի կանոնակարգ կարելի է հաշվի առնել ՀՀ օրենսդրության համար՝ հաճախակի փոփոխություններից խուսափելու համար:

Ավելի դժվար ու հակասական է բնակիչների կողմից ընտրված համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու հարցը: Անձամբ եւ կարծում եմ, որ ժողովրդավարական համակարգում վատ համայնքի ղեկավարից ազատվելու հարցի պատասխանը շատ պարզ է: Մեխանիզմը հայտնի է եւ կոչվում է տեղական իշխանության հերթական ընտրություններ: Եթե համայնքի ղեկավարը լավ չի իրականացնում իր լիազորությունները, ապա բնակիչները պետք է դա նկատեն եւ չընտրեն նրան հաջորդ ընտրությունների ժամանակ: Եվ փաստարկը, թե «բնակիչները չեն հասկանում» ինչն է իրենց համայնքի համար լավ, ուստի ինչ-որ մեկը պետք է գործողություններ ձեռնարկի, եթե նրանք «սխալ որոշում կայացնեն» նվազագույնը պատերազմի ստանդարտն է, իսկ առավելագույնը՝ խաթարում է ժողովրդավարական տեղական ինքնիշխանության գաղափարը՝ առաջարկելով, որ կենտրոնական իշխանություններն ավելի լավ գիտեն, թե ինչպես պետք է տեղական իշխանությունները ղեկավարվեն: Ապակենտրոնացված ժողովրդավարական համակարգում կան բնակիչներ (քա-

ղաքացիներ), որոնք որոշում են, թե որն է լավ իրենց համայնքի համար, եւ եթե տեղական իշխանությունը հարգում է օրենքն ու հանցանքներ չի գործում, ապա կենտրոնական իշխանությունն իրավունք չունի քաղաքական որոշումներ կայացնել այն հարցի շուրջ, թե որն է տեղական համայնքի համար ճիշտ կամ սխալ քաղաքականությունը: Ներկայացնեմ սեփական փորձս: Լեհաստանում ապակենտրոնացման բարեփոխումների սկզբում եւ Վարշավայի վարչական շրջաններից մեկում ավագանու անդամ էի: Ես ավագանու հանձնաժողովներից մեկի երիտասարդ ղեկավարն էի, եւ մեր խորհուրդը հանձնաժողովիս կողմից առաջարկված անսովոր որոշում ընդունեց: Ես իմացա, որ շրջանի ղեկավարի փաստաբանը, որը վերապատրաստվել էր ինչ քաղաքական համակարգում, պլանավորում էր առաջարկել նրան որոշումը ուժը կորցրած ճանաչել (շրջանի ղեկավարն իրավունք ունի ավագանու որոշումն ուժը կորցրած հայտարարել, եթե այն օրենք է խախտում): Ես չգիտեի, թե որ օրենքն էինք մենք խախտել, եւ դրանից ինձ շատ վատ էի զգում: Ես նրան կանչեցի ու հարցրեցի նրա ծրագրերի ու կարծիքի մասին: Նա ինձ ասաց, որ այդ, պլանավորում է մարզպետին ներկայացնել առաջարկը, քանի որ որոշումը հիմարություն է: Այդ ժամանակ ես հասկացա, որ ես եմ ճիշտ, այլ ոչ թե նա: Ես հարցրեցի. «Ենթադրե՞նք հիմարություն է, եւ ի՞նչ: Ո՞ր օրենքն է ասում, որ տեղական իշխանությունը չի կարող հիմար որոշումներ կայացնել: Դա օրենքի դեմն է»: Իհարկե, ես չէի մտածում, որ մեր որոշումը հիմար էր, ես ուղղակի նկատի ունեի, որ կենտրոնական կառավարությունը չպետք է գնահատական տա տեղական իշխանության կայացրած որոշումներին (ինչպես նախկինում՝ խորհրդային համակարգի ժամանակ): Որոշ ընկերություններից հետո փաստաբանը ստիպված էր համաձայնել իմ փաստարկների հետ, եւ որոշումն ուժը չկորցրեց:

Ես, սակայն, կարող եմ (դժվամությամբ) ընդունել, որ հաճախ բացառիկ դեպքեր են լինում, երբ հերթական ընտրությունների սպասելը կարող է չափազանց մեծ վնասներ հասցնել: Այսպիսի դեպքերում որոշ երկրներում (ոչ մեծ թվով) ավագանուն թույլատրված է նախաձեռնել համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու գործընթաց: Սովորաբար, դրա համար անհրաժեշտ է ավագանու անդամների ընդհանուր թվի բացարձակ մեծամասնությունը (ոչ միայն 50%): Մի շարք այլ երկրներում (այդ թվում՝ նաեւ Լեհաստանում) դա կարող է իրականացվել հանրաքվեի միջոցով: Լեհաստանի պարագայում ավագանին կարող է կազմակերպվել կամ հանրապետական կողմից (այդ դեպքում, եթե հանրաքվեն ձայնողի, ապա դա նշանակում է ավագանու արտահերթ ընտրություն), կամ մի

խումբ քաղաքացիների, որոնք ստորագրում են հանրագիրը (ընտրելու իրավունք ունեցող անձանց 10%-ը պետք է ստորագրի հանրագիրը): Գոյություն ունի նաեւ հանրաքվեի վավեր ճանաչվելու շեմ (ընտրությանը մասնակցած ընտրողների 3/5-րդը պետք է մասնակցի հանրաքվեին): Եթե համայնքի ղեկավարը հանրաքվեի արդյունքում պաշտոնանկ է արվում, ապա համայնքի նոր ղեկավար ընտրելու համար կազմակերպվում է արտահերթ ընտրություն (եթե հաջորդ ընտրությունը պետք է կայանա 6 ամիս հետո, այդ դեպքում վարչապետը կարող է նշանակել հանձնակատարի, որը կղեկավարի համայնքը մինչեւ ժամկետի ավարտը): Եթե հանրաքվեն ձայնողի (բավականաչափ ընտրողներ չաչակցեն համայնքի ղեկավարի պաշտոնանկությանը), ապա հաջորդ հանրաքվեն պետք է կազմակերպվի 12 ամսից ոչ շուտ:

Լեհաստանում 2002-2014թթ. համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու 350 հանրաքվե է անցկացվել: Համայնքների ընդհանուր թիվը 2500 է, ինչը նշանակում է, որ բոլոր համայնքապետների պաշտոնների 4.7%-ը վերջին 12 տարվա ընթացքում հարցականի տակ է դրվել: Հանրաքվեներից 33-ի (0.4%) արդյունքում «հաջողություն է գրանցվել» (նախաձեռնողների տեսակետից), դրանք հանգեցրել են քաղաքապետի պաշտոնանկության եւ արտահերթ ընտրությունների:

Տարբեր եվրոպական երկրներում համայնքի ղեկավարին մինչեւ իր լիազորությունների ավարտը պաշտոնանկ անելու հնարավորությունը

	Բնակիչների կողմից ընտրված	Ավագանու կողմից նշանակված
Կարող է պաշտոնանկ արվել ավագանու կողմից	Իտալիա, Պորտուգալիա, Ռումինիա	Չեխիա, Անգլիա, Գերմանիա, Իռլանդիա, Լատվիա, Նիդերլանդներ, Նորվեգիա, Սերբիա, Շվեդիա
Կարող է պաշտոնանկ արվել հանրաքվեի միջոցով	Ավստրիա, Խորվաթիա, Կիպրոս, Իսլանդիա, Լեհաստան, Պորտուգալիա, Սլովակիա, Բուլղարիա	Լատվիա, Լիտվա
Չի կարող պաշտոնանկ արվել	Ալբանիա, Անգլիա, Ֆրանսիա, Գերմանիա, Հունաստան, Հունգարիա, Սլովենիա, Շվեյցարիա	Բելգիա, Դանիա

Նշում. Մի քանի երկրներում (Ավստրիա, Անգլիա, Գերմանիա) որոշ համայնքի ղեկավարներ ընտրվում են, իսկ մյուսները նշանակվում են ավագանու կողմից: Այդ պատճառով այդ երկրներն աղյուսակում կարող են երկու անգամ լինել:

Որոշ եվրոպական երկրներ թույլ չեն տալիս պաշտոնանկ անել համայնքի ղեկավարին մինչեւ վերջինիս լիազորությունների ավարտը՝ նույնիսկ հանրաքվեի միջոցով: Համայնքի ղեկավարի պաշտոնի եւ

**ՊՎԵԼ ՍՎԻՍԵՎԻՉ
ՀամաՏեղ ծրագրի միջազգային փորձագետ
Անգլերենից թարգմանեց Մանե Աղայանը**

2017թ. օգոստոսի 30-ին ՀամաՏեղ ծրագրի շրջանակներում Կոտայքի մարզպետարանում տեղի ունեցավ «Համայնքների պաշտոնական համացանցային կայքերը. մասնակցային էլեկտրոնային գործիքներ եւ դրանց կիրառման առանձնահատկությունները: Կոտայքի մարզի համայնքների կայքերի օրինակը» թեմայով սեմինար-քննարկում:
«Տեղեկատվական համակարգերի զարգացման եւ վերապատրաստման կենտրոն» (ՏՀՎԿ) ՀԿ նախագահ Գրիշա Խաչատրյանը ներկայացրեց գեկուցում «Համայնքների պաշտոնական համացանցային կայքերը. մասնակցային էլեկտրոնային գործիքներ եւ դրանց կիրառման առանձնահատկությունները: Կոտայքի մարզի համայնքների կայքերի օրինակը» թեմայով: Մասնավորապես,

ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ

անդրադարձ եղավ համայնքապետարաններում շահագործվող ՀԿՏՀ էլեկտրոնային մասնակցային գործիքներին, ինչպես նաեւ օրենսդրական փոփոխությունների, համայնքների խոշորացման արդյունքում ծրագրված համակարգի լրամշակման հարցերին:
Այնուհետեւ ըստ համայնքների ներկայացվեցին Կոտայքի մարզի համայնքապետարանների կողմից «Համայնքա-

յին կառավարման տեղեկատվական համակարգի» շահագործման մշտադիտարկման արդյունքները: Խոսվեց ընդհանրական խնդիրների մասին, ապա նաեւ մատնանշվեցին դրանց լուծման եղանակները: Որպես օրինակելի կայքեր մատնանշվեցին Աբովյանի համայնքապետարանի www.abovyan-kotayk.am, Հրազդանի համայնքապետարանի <http://130.193.123.18>, Գետամեջի հա-

մայնքապետարանի <http://getamej.am> կայքերը:
Այնուհետեւ ներկայացվեցին Կոտայքի մարզի համայնքապետարանների կողմից ՀԿՏՀ տարբեր բաղադրիչների շահագործման ընդհանրական, վերլուծական ցուցանիշները:
Չեկուցմամբ հանդես եկավ նաեւ ՏՀՎԿ աշխատակից Ռոբերտ Գրիգորյանը: Նա ներկայացրեց նաեւ ՀամաՏեղ ծրագրի համացանցային պորտալը՝ www.celog.am, նրա դերն ու գործառնական հնարավորությունները, ինչպես նաեւ՝ ֆեյսբուքյան էջը: Չեշտվեց, որ այդ ռեսուրսները մեծ ծավալի տեղեկատվություն են պարունակում ՀՀ ՏԻՄ ոլորտում իրականացվող բարեփոխումների վերաբերյալ:
Սեփ. լր.

ՀԱՄԱՏԵՂ ԾՐԱԳՐԻ ՓՈՔԻ ԴՐԱՄԱՇՆՈՐՅԻ

Ինչպես տեղեկացրել էինք «Համայնք-ՀամաՏեղ» պաշտոնաթերթի 6-րդ համարում, ՀամաՏեղ ծրագրի փոքր դրամաշնորհի շրջանակներում հաղթող էր ճանաչվել 7 կազմակերպություն, որոնց հետ լրացուցիչ քննարկումների և ձեռք բերված փոխհամաձայնությունների հիման վրա ճշտվել են ծրագրերի գործողությունները, ակնկալվող արդյունքները, իրականացման ժամկետները, ինչպես նաև ծրագրերի բյուջեները:

Քննարկումների արդյունքում ծրագրերից երկուսը, որոնք նախատեսված էր իրականացնել միեւնույն համայնքներում, հնարավոր է դարձել միավորել՝ ապահովելով ծրագրերի առավել արդյունավետ իրականացումը և երաշխավորելով լրացուցիչ արդյունք:

Ստորև ներկայացնում ենք ընտրված 4 ծրագրերի նպատակները և ակնկալվող արդյունքները:

«Գեղարեգ» կրթամշակութային ՀԿ. TIMING- ՏԻՄ Ինքնակառավարման կործնելանոց

Ծրագրի նպատակն է՝ բարձրացնել բնակչության ներգրավվածության մակարդակը համայնքային կառավարման գործընթացում, ձեռնարկել հաշվետու և մասնակցային ՏԻՄ, նպաստել քաղաքացիական խմբերի հզորացմանը:

Ակնկալվող արդյունքները (քանակական)

1. 4 համայնքների ՏԻՄ-երի 15 ներկայացուցիչների մոտ 10 դասընթացների արդյունքում զարգացել են հաղորդակցման և կառավարման կարողությունները:

2. 15 ֆորում-թատրոնների օգնությամբ 375 մարդ մասնակցել է տեսակետների փոխանակման և իրազեկման միջոցառումների, 125 մարդ մասնակցել է 5 բանավեճերի և արդյունքում ձեռնարկվել է մասնակցային կառավարման կործնելանոց:

3. ՀամաՏեղ-ի թիրախային 7 համայնքների ՏԻՄ-երը են ակտիվ խմբերը ծանոթացել են նախորդ ծրագրի հաջողված պատմություններին և փորձին:

4. 150 երիտասարդ և պատանի լուսանկարների և սկզբնական ցուցահանդես- մրցույթի միջոցով բարձրաձայնել են համայնքային հիմնախնդիրները և դրանք ներկայացվել են ՏԻՄ-երին:

5. 20 երիտասարդի մոտ զարգացել են սոցիալական և քաղաքական խնդիրներին լուծում տալու հմտություններ և խոսքի մշակույթը:

6. 120 մարդ մասնակցել է ֆոկլոր-խմբային քննարկումների, վերհանել խնդիրներ և դրանք ներկայացրել ՏԻՄ-երին:

7. 240 մարդ մասնակցել է հանրային-քննարկումների և լուսամների, ծանոթացել համայնքի 2017թ. բյուջեի կատարողականին և 2018թ. բյուջեների նախագծին:

8. 160 մարդ մասնակցել է ավագանու նիստերի և 8 հեռուստալուրի արդյունքում 230 000 պոստենցիալ հեռուստադիտողներ իրազեկվել են ավագանու նիստերի և կայացրած որոշումների վերաբերյալ:

9. Բնակչությունը մասնակցում է մամուլի ասուլիսների, ընդգրկված է Երեւանի Մամուլի ակումբի կողմից իրականացվող հանրային իրազեկման գործընթացներում և միաժամանակ «Գեղարեգ»-ի ֆեյսբուքյան պաշտոնական էջի 1589 օգտատեր իրազեկվել է ծրագրի գործողությունների մասին:

Ակնկալվող արդյունքները (որակական)



• Ամրապնդվել է ՏԻՄ-երի և քաղաքացիների, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության համագործակցությունը:

• Ձեռնարկվել է մասնակցային ՏԻՄ մշակույթ:

• Բարձրացել է որոշումների կայացման գործընթացում հանրային մասնակցությունը:

Ծրագրի նպատակներն իրագործելի են և ակնկալում են հանգեցնել հետեւյալ արդյունքներին՝

• Փարաքար համայնքի բնակիչների, հատկապես՝ երիտասարդների շրջանում կբարձրանա մասնակցային կառավարման վերաբերյալ իրազեկվածության մակարդակը, ինչին կնպաստեն



«ԿԱՍԸ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոնը պարբերաբար կազմակերպում է համայնքային կյանքին երիտասարդների մասնակցայնությունը խթանող ծրագրեր

նակցության դերը:

• Վերհանված հիմնախնդիրները ներառվում են համայնքների բյուջեներում:

• Ձեռնարկվել է թափանցիկ և արդյունավետ կառավարման մշակույթ:

• Բարձրացել է քաղաքացիների իրազեկվածության աստիճանը:

• Ակտիվացել է միջմշակութային համագործակցությունը:

«ԿԱՍԸ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն» ՀԿ. «Համայնքն իմ տունն է, ես մասնակցում եմ համայնքի կառավարմանը»

Ծրագրի նպատակն է նպաստել ծրագրի շահառու Փարաքար համայնքում քաղաքացիների ակտիվ և իրազեկ մասնակցությանը տեղական ինքնակառավարմանը՝ համայնքի բնակիչների, հատկապես՝ երիտասարդների շրջանում մասնակցային կառավարման վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացման, նրանց կողմից համայնքային խնդիրների բարձրաձայնման և հանրային նախաձեռնությունների իրականացման միջոցով: Ծրագիրը նպատակ ունի նաև համայնքում այլընտրանքային ՉԼՄ-ների զարգացման միջոցով նպաստել տեղական ինքնակառավարման վերահսկողությանը, ՏԻՄ-համայնքի բնակչություն հարողակցման որակի բարելավմանը:



«Հուլիսի Մեծամոր» հաշմանդամների հիմնահարցերով զբաղվող ՀԿ-ն պարբերաբար իրականացնում է ծրագրեր՝ համայնքի երեխաների համար:

իրականացված դասընթացը, մասնակցային կառավարման վերաբերյալ սոցիալական հովվակի և թուղիկների տարածումը, «Համայնքն իմ տունն է, ես մասնակցում եմ համայնքի կառավարմանը» շարադրությունների և սկզբնական մրցույթները և այլն:

• Փարաքարում համայնքային հիմնախնդիրների բացահայտում, հանրային նախաձեռնությունների՝ հանրագրի իրականացում, ինչին կնպաստեն դասընթացի մասնակիցների կողմից ստեղծված բլոգները, համայնքի վերաբերյալ ֆիլմի ցուցադրումը, համայնքային խնդիրների պատի ստեղծումը, հանրային քննարկումը և համայնքային նշանակության որեւէ առաջնահերթ հարցի (կամ հարցերի) շուրջ հանրագրի իրականացումը, որը համայնքի բնակիչների համար կդառնա նախադեպ՝ հետագայում համայնքային այլ խնդիրներ բարձրաձայնելու և հանրագրերի միջոցով խնդիրը ՏԻՄ-ի լուծմանը ներկայացնելու համար:


• Այլընտրանքային ՉԼՄ-ների զարգացում Փարաքարում, ինչին կնպաստեն դասընթացի ընթացքում քաղաքացիական լրագրողի հմտություններ ստացած երիտասարդները՝ ստեղծելով բլոգներ և լուսաբանելով համայնքի առօրյան ու ՏԻՄ գործունեությունը: Այդ բլոգները կդառնան համայնքային իրադարձությունները և խնդիրները լուսաբանելու, դրանք հասարակությանն ու ՏԻՄ-ին ներկայացնելու յուրահատուկ սոր մեդիա հարթակ, համայնքի բնակիչ-ՏԻՄ կապի ամրապնդման ինքնատիպ մեխանիզմ: Ծրագրի շահառուները, տիրապետելով այլընտրանքային ՉԼՄ-ների և քաղաքացիական լրագրության հիմունքներին, որպես Փարաքարի թղթակիցներ կարող են համագործակցել նաև մարզային և հանրապետական տարբեր ՉԼՄ-ների հետ՝ կայքեր, թերթեր, ռադիո: Սա մի կողմից կհանգեցնի Փարաքար համայնքի իրադարձություններն ու խնդիրները ավելի մեծ հարթակներում ներկայացնելուն, մյուս կողմից՝ կնպաստի շահառու երիտասարդների զբաղվածության խնդրի որոշակի մեղմացմանը:

«Հուլիսի Մեծամոր» ՀԿ. Մենք ենք տեղը մեր համայնքի

Ծրագրի նպատակն է խթանել Մեծամորի և Մրգաշատի բնակչության մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը՝ բարձրացնելով նրանց իրազեկության մակարդակը քաղաքացիական ակտիվության և իրավունքների վերաբերյալ:

Ակնկալվող արդյունքներն են՝

• Կբարձրանա քաղաքացիների իրազեկության աստիճանը տեղական ինքնակառավարման մասին և մասնակցության աստիճանը տեղական մակարդակով որոշումների կայացման գործընթացներում:



ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ



«Հուլիսի Մեծամոր» ՀԿ-ն ակտիվ է համայնքային նշանակության շատ ծրագրերում:



Համայնքային ակտիվ խմբերը նիստի օրակարգում հարց ընդգրկելու հանդես են եկել համայնքի ավագանու նախաձեռնությամբ:



• Կբարելավվի թիրախ համայնքների ՏԻՄ-երի թափանցիկ եւ հաշվետու գործունեությունը:

• Կխթանվի բնակչություն-ՏԻՄ կապը՝ ի նպաստ տեղական ինքնակառավարման համակարգի բարելավման:

«Դինամիկա» Զաղաքացիական նախաձեռնություն. Գյուղամեջ

Ծրագրի նպատակն է՝ ներգրավելով համայնքների ակտիվ խմբերին, խթանել հանրային քննարկումները, նպաստել ՏԻՄ-երի գործունեության հաշվետվողականության բարձրացմանը՝ ապահովելով հանրության մասնակցություն տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների ընդունման գործընթացում:

Ակնկալվող արդյունքներն են՝

• Կազմվել է Տեղ, Տարբե համայնքների 15 բնակավայրերի խնդիրների օնլայն քարտեզ /«ուշահիդի» առցանց գործիքի օգնությամբ/:

• Թիրախ Տեղ, Տարբե համայնքների խնդիրների մասին պատրաստվել է 12 մուլտիմեդիա նյութ, տարածվել համացանցում, ֆեյսբուքյան էջերում, տրամադրվել մարզային լրատվամիջոցներին՝ տարածելու կամ ցուցադրելու նպատակով:

• Տարբե, Տեղ, համայնքների ՏԻՄ-ին ներկայացվել են առաջարկներ 2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագրում առավել մեծ հետաքրքրություն ունեցող խնդիրները ներառելու համար:

• Տարբե, Տեղ համայնքային ակտիվ խմբերը համագործակցում են տեղական ինքնակառավարման մարմինների հետ եւ ներգրավված են որոշումների ընդունման գործընթացում:

ՀամաՏեղ ծրագրի կարելորագույն բաղադրիչներից մեկը ենթադրում է խոշորացված թիրախ համայնքներում հասարակական վերահսկողությանը եւ խոշորացման ընթացքի դիտարկմանն ուղղված գործողությունների իրականացում: Այդ նպատակով համայնքներում կազմակերպվող միջոցառումներից բացի, ՀամաՏեղ ծրագրի շրջանակներում պարբերաբար իրականացվում են հետազոտություններ, որոնց նպատակն է այլընտրանքային գնահատական տալ տեղական ինքնակառավարման ոլորտում տեղի ունեցող գործընթացներին եւ մասնավորապես՝ խոշորացմանը:

Այդ նպատակով Եվրասիա համագործակցություն հիմնադրամը (ԵՀՀ) դեռեւս գարնանը խոշորացված Թումանյան, Դիլիջան եւ Տարբե համայնքներում խոշորացումից հետո համայնքային գույքի կառավարման եւ համայնքային ծառայությունների որակի գնահատման վերաբերյալ ստվերային զեկույց պատրաստելու մրցույթ հայտարարեց:

Այս հետազոտության արդյունքում հնարավոր կլինի գնահատել համայնքային կյանքի եւ կառավարման մի շարք կարեւոր բաղադրիչներ եւ հասկանալ, թե ինչ ազդեցություն է ունեցել խոշորացումը դրանց վրա:

Մասնավորապես, հետազոտության արդյունքում կպարզվի թե ինչպիսին է համայնքային սեփականության կառավարման ընթացքը խոշորացված համայնքներում, կգնահատվեն համայնքային գույքի կառավարման մեխանիզմների արդյունավետությունը եւ թափանցիկությունը, կբացահայտվի՝ կա՞ն արդյոք որակական փոփոխություններ խոշորացված համայնքներում գործող նախադպրոցական եւ արտադպրոցական հաստատությունների, գրադարանների, թանգարանների, մշակույթի տների

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԵԿՈՒՅՑԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԵՋ ԵՆ



կողմից մատուցվող ծառայություններում, ինչպես նաեւ կհամեմատվի համայնքային սեփականության կառավարումը մինչեւ խոշորացումը եւ խոշորացումից հետո:

Հետազոտության արդյունքում կվազվեն առաջարկություններ բազմաբնակավայր համայնքների համայնքային սեփականության կառավարման թափանցիկության եւ արդյունավետության բարձրացման վերաբերյալ, իսկ հետազոտության զեկույցը կներկայացվի բո-

լոր հետաքրքրված կողմերին: Մրցույթի ավարտից եւ հաղթող փորձագիտական խումբն ընտրելուց հետո ԵՀՀ համալրված թիմը մշակեց հետազոտության մեթոդաբանությունը եւ այժմ իրականացնում է դաշտային աշխատանքներ՝ հետազոտության համար անհրաժեշտ տվյալները հավաքագրելու նպատակով:

Հետազոտությունն իր մեջ ներառում է շուրջ 15 խորին հարցազրույց, մինչեւ 100 կիսաստանդարտացված հարցազրույցներ համայնքային ոչ առեւտրային կազմակերպությունների ղեկավարների հետ, փաստաթղթերի վերլուծություն, համայնքային ռեսուրսների գնահատում, շահառու խմբերի հետ ֆոկլուս խմբային քննարկումներ եւ այլն:

Ընթացիկ տարվա հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին արդեն իսկ պատրաստ կլինի հետազոտության արդյունքներն ամփոփող զեկույցը եւ կներկայացվի բոլոր շահագրգիռ կողմերին:

ՄԻԷԼԱՅԵԼ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀամաՏեղ ծրագրի համընկերության
համակարգող

← էջ 1

«ՎԱՐՉԱՎԱՍ ԻՐԱՎԱՆԱԿՆՈՒՄԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆԱԳՐԵՈՒՄ» ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Յոդված 1. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 7-րդ գլխի վերնագրում «միջավայրի» բառից հետո լրացնել «թափոնների կառավարման» բառերով:

Յոդված 2. Օրենսգրքի 58-րդ հոդվածից հետո լրացնել նոր 58.1-րդ, 58.2-րդ, 58.3-րդ, 58.4-րդ, 58.5-րդ, 58.6-րդ, 58.7-րդ, 58.8-րդ, 58.9-րդ, 58.10-րդ, 58.11-րդ, 58.12-րդ հոդվածներ հետևյալ բովանդակությամբ.

«Յոդված 58.1. Շրջակայքի աղբոտումը համայնքային թափոններով

Շրջակայքի աղբոտումը մինչև 2 կգ համայնքային թափոնով առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի տասնվեցապատիկի չափով:

Նույն գործողությունը, կատարված բնակելի տնից կամ այլ շենքից կամ շինությունից՝ քսանապատիկի չափով:

Շրջակայքի աղբոտումը կատարված փոխադրամիջոցից, առաջացնում է տուգանքի նշանակում վարորդի, իսկ հանրային, այդ թվում երկաթուղային, փոխադրամիջոցի դեպքում՝ իրավախախտի նկատմամբ, սահմանված նվազագույն աշխատավարձի քսանչորսապատիկի չափով:

Շրջակայքի աղբոտումը մինչև 5 հատ անվաղողով /բացառությամբ հեծանվի դողը/, առաջացնում է տուգանքի նշանակում երեսունապատիկի չափով:

Շրջակայքի աղբոտումը 5-ից ավել անվաղողով /բացառությամբ հեծանվի դողը/ հարյուրապատիկի չափով:

Շրջակայքի աղբոտումը մարտկոցներով, էլեկտրական կուտակիչներով, էլեկտրալամպերով, էլեկտրոնային ապրանքներով, գրաֆիտային էլեկտրոդներով, կտրող եւ ծակող առարկաներով /ետրայալ ապակե ջարդոն, մեխեր կամ այլ նման առարկաներ/, առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

Շրջակայքի աղբոտումը 2 կգ եւ ավել համայնքային թափոնով /բացառությամբ սույն հոդվածի հաջորդ մասով նախատեսված դեպքերից/ առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի ֆիզիկական անձանց դեպքում՝ երեսունապատիկի, իսկ իրավաբանական անձանց դեպքում՝ հարյուրապատիկի չափով:

Շրջակայքի աղբոտումը 1 խոր. մ եւ ավել համայնքային թափոնով առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի ֆիզիկական անձանց դեպքում՝ վաթսուսապատիկի, իսկ իրավաբանական անձանց դեպքում՝ երկուհարյուրապատիկի չափով:

Շրջակայքի աղբոտումը խոշոր եզրաչափ ունեցող համայնքային թափոններով /ետրայալ փոխադրամիջոցներով, էլեկտրական եւ ինժեներական սարքավորումներով, շինարարական կամ այլ նման սարքավորումներով/ առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի ֆիզիկական անձանց դեպքում՝ հարյուրապատիկի, իսկ իրավաբանական անձանց դեպքում՝ երեսունապատիկի չափով:

«Յոդված 58.2. Շրջակայքի աղբոտումը շինարարական կամ այլ իներտ թափոններով

Շրջակայքի աղբոտումը մինչև 1 խոր. մ շինարարական կամ այլ իներտ թափոնով առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի ֆիզիկական անձանց դեպքում՝ երեսունապատիկի չափով:

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ

քում քառասունապատիկի, իսկ իրավաբանական անձանց դեպքում՝ հարյուրապատիկի չափով:

Շրջակայքի աղբոտումը 1 խոր. մ ավել շինարարական կամ այլ իներտ թափոնով առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի ֆիզիկական անձանց դեպքում՝ հարյուրապատիկի, եւ իրավաբանական անձանց դեպքում՝ երեքհարյուրապատիկի չափով:

«Յոդված 58.3. Տարածքի աղտոտումը տիրոջ կենսաբանական նյութերով կամ կոյուղու թափոններով

Տարածքի աղտոտումը ընտանի կամ այլ կենդանիների փոքրաչափ կենսաբանական նյութերով առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

Տարածքի աղտոտումը մինչև 1 խոր. մ ծավալի կենսաբանական նյութերով, կոյուղու թափոններով առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի ֆիզիկական անձանց նկատմամբ՝ երեսունապատիկի, իսկ իրավաբանական անձանց նկատմամբ՝ հարյուրապատիկի չափով:

Տարածքի աղտոտումը 1 խոր. մ ծավալը գերազանցող կենսաբանական նյութերով, կոյուղու թափոններով առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի՝ ֆիզիկական անձանց նկատմամբ՝ հարյուրապատիկի, եւ իրավաբանական անձանց նկատմամբ՝ երեսունապատիկի չափով:

«Յոդված 58.4. Շրջակայքի աղբոտումը կենդանական թափոններով

Շրջակայքի աղբոտումը կենդանիների մինչև 20 կգ զանգվածով /ետրայալ սպանդանոցներից/ առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի ֆիզիկական անձանց նկատմամբ՝ երեսունապատիկի, եւ իրավաբանական անձանց նկատմամբ՝ հարյուրապատիկի չափով:

Շրջակայքի աղբոտումը կենդանիների 20 կգ գերազանցող զանգվածով /ետրայալ սպանդանոցներից/ առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի ֆիզիկական անձանց նկատմամբ՝ վաթսուսապատիկի, իսկ իրավաբանական անձանց նկատմամբ՝ երկուհարյուրապատիկի չափով:

«Յոդված 58.5. Շրջակայքի աղբոտումը կամ աղտոտումը թափոն փոխադրելիս

Թափոն փոխադրելիս շրջակայքի աղբոտումը կամ աղտոտումը անվտանգ թափոնով առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի ֆիզիկական անձանց նկատմամբ՝ քառասունապատիկի, իսկ իրավաբանական անձանց նկատմամբ՝ ութսունապատիկի չափով:

Թափոն փոխադրելիս շրջակայքի աղբոտումը կամ աղտոտումը վտանգավոր թափոնով առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի ֆիզիկական անձանց նկատմամբ՝ յոթասունապատիկի, իսկ իրավաբանական անձանց նկատմամբ՝ հարյուր վաթսունապատիկի չափով:

«Յոդված 58.6. Թափոնի փոխադրման

կարգի խախտումը

Անվտանգ թափոնի փոխադրման կարգի խախտումը առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի քառասունապատիկի չափով:

«Յոդված 58.7. Թափոնների հավաքման, փոխադրման, նախամշակման եւ ժամանակավոր պահեստավորման գրանցման համար ընթացակարգերի եւ պայմանների կամ համայնքային թափոնի հավաքման եւ վճարման համար ընթացակարգի խախտումը

Թափոնի հավաքումն ու փոխադրումը առանց համապատասխան գրանցման առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

Անվտանգ թափոնների համար նախամշակման հաստատության կազմակերպումն ու շահագործումը առանց համապատասխան գրանցման առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

Համայնքային թափոնների փոխաբեռնման կայանի կազմակերպումն ու շահագործումը առանց համապատասխան գրանցման առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

Հիսուն տոննա եւ ավելի անվտանգ թափոնների ժամանակավոր պահեստարանի կազմակերպումն ու շահագործումը առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

«Համայնքային թափոնների կառավարման» մասին ՀՀ օրենքով սահմանված գրանցման պահանջների չկատարումը առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

Համայնքային թափոնների հավաքման եւ մշակման ընթացակարգերի խախտումը առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

«Համայնքային թափոնների կառավարման» մասին ՀՀ օրենքով սահմանված ժամկետում համայնքային թափոնների կառավարման ծրագիրը չնախատեսված կարգերով ծրագրով նախատեսված գործողությունները չկատարելը առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:

«Յոդված 58.8. Գոյություն ունեցող աղբավայրերի շահագործման ժամկետների եւ պայմանների խախտում

Գոյություն ունեցող աղբավայրերի համար «Համայնքային թափոնների կառավարման» մասին ՀՀ օրենքով սահմանված ժամկետների եւ պայմանների խախտումը առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի վեցհարյուրապատիկի չափով:

«Յոդված 58.9. Թափոնների հաշվառման եւ հաշվետվություն ներկայացնելու պարտավորությունը չկատարելը

Թափոնների հաշվառման եւ հաշվետ-

վություն ներկայացնելու պարտավորությունը չկատարելը առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի քառասունապատիկի չափով:

«Յոդված 58.10. Օրենսգրքի 58.1-րդից 58.11-րդ եւ 85.3-րդ հոդվածների համաձայն վարչական իրավախախտումներ արձանագրելու լիազոր անձանց պահանջները չկատարելը

Սույն օրենսգրքով սահմանված վարչական իրավախախտում կատարելուց հետո, սահմանված ժամկետում վարչական իրավախախտումը վերացնելու պարտավորությունը չկատարելը հանգեցնում է վարչական իրավախախտում արձանագրող լիազոր մարմնի կողմից վարչական պատժի /տուգանքի/ սույն օրենսգրքի համապատասխան հոդվածի կամ կետի, որի խախտման համար անձը պարտավոր է վերացնել վարչական իրավախախտումը:

Սահմանված վարչական իրավախախտում արձանագրող լիազոր մարմնի աշխատակցի պարտավորությունների կատարմանը եւ/կամ լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:

Վարչական իրավախախտում արձանագրող լիազոր մարմնի աշխատակցի օրինական պահանջը չկատարելը /ետրայալ երկրի օրենսդրության համաձայն առկա փաստաթղթերի, նյութերի եւ տեղեկատվության չներկայացնելը, ստուգման ընթացքում ներկայացված փաստաթղթերի հրաժարվելը/ առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

«Յոդված 58.11. Սույն օրենսգրքի 58.1-րդ, 58.2-րդ, 58.3-րդ, 58.4-րդ, 58.5-րդ, 58.6-րդ, 58.7-րդ, 58.8-րդ, 58.9-րդ, 58.10-րդ, 58.11-րդ եւ 85.3 -րդ հոդվածներով սահմանված իրավախախտումները կրկին կատարելը առաջացնում է տուգանքի նշանակում վերջինս հոդվածներով սահմանված տուգանքների կրկնապատիկի չափով սույն օրենսգրքի 58.1-րդ, 58.2-րդ, 58.3-րդ, 58.4-րդ, 58.5-րդ, 85.3 -րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումները պետական արգելոցների, ազգային պարկերի բնության պաշտպանության գոտիներում, բնության հուշարձաններում, կենսոլորտի միջուկի գոտում, միջազգային նշանակություն ունեցող համաշխարհային ժառանգության տեղամասում, ենթակա կլիմայի տուգանման համապատասխան տուգանքի կրկնակի չափով, իսկ նշված վարչական իրավախախտման կրկին իրականացման դեպքում մեծացնում է համապատասխան տուգանքի չափը քառակի անգամ»:

Յոդված 3. Օրենսգրքի 85.2-րդ հոդվածից հետո լրացնել նոր 85.3-րդ հոդված հետևյալ բովանդակությամբ.

«Յոդված 85.3. Անվտանգ թափոնի այրումը բաց երկնքի տակ կամ այրման համար չնախատեսված սարքավորումներում

Անվտանգ թափոնների այրումը /այդ թվում տերեւները, կանաչ/այգու, կենցաղային թափոնները/ բաց երկնքի տակ կամ այրման համար չնախատեսված սարքավորումներում առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի քառասունապատիկի չափով:

Անվտանգ թափոնների /բացառությամբ սույն առաջին պարբերության նշվածի/ այրումը /այդ թվում անվաղողները, ռետինե եւ այլ էլաստիկ նյութեր/ բաց երկնքի տակ կամ այրման համար չնախատեսված սարքավորումներում առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ԶԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ



«Մարաթոնային կառավարման և զարգացման նախարարություն»

Օգոստոսի 7-8-ը Շիրակի մարզի Ամասիա եւ Աշոցք խոշորացված համայնքների ներկայացուցիչների համար անցկացվել են վերապատրաստման դասընթացներ «Ծրագրերի կազմում եւ լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավում» թեմայով:

ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարի տեղակալ Վարազդատ Կարապետյանը կարելորել է ներկայացվող ծրագրերի իրատեսական լինելը, հորդորել է նախաձեռնող լինել եւ ակտիվություն ցուցաբերել համայնքային տնտեսական զարգացման ծրագրեր ներկայացնելու հարցում: Նրա խոսքով, իրատեսական եւ հեռանկարային ծրագրերը աշակցություն կստանան:

Դասընթացի ժամանակ ԳՄՀԸ «Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագրի խորհրդատու Արմեն Զեչիշյանը մասնակիցներին ներկայացրել է ծրագիրը, դրա նպատակները: Զննարկվել են տվյալ համայնքների մրցակցային առավելությունները, համայնքների ներկայացուցիչներին ներկայացվել է իրենց համայնքներում տնտեսական զարգացման հնարավորությունները, ծրագրերի կառուցման եւ միջոցների հայթայթման մեթոդներն ու գործիքակազմը՝ արդյունքում մասնակցային եղանակով ձեւավորելով ծրագրային առաջարկներ:

Երկօրյա դասընթացներն իրականացվում են Գերմանիայի միջազգային զարգացման ընկերության (ԳՄՀԸ) «Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագրի «Տեղական տնտեսական զարգացում» բաղադրիչի շրջանակներում: Դասընթացն ուղղված է ՏԻՄ-երի կարողությունների եւ հմտությունների զարգացմանը՝ համայնքներում տնտեսական ծրագրային առաջարկների կազմման եւ ներկայացման բնագավառում:

Նախատեսված է նման դասընթացներ անցկացնել բոլոր տասնութ խոշորացված համայնքներում: Արդեն իսկ դրանք ավարտվել են Վայքում (Վայք եւ Չառիթափ համայնքների համար), Գորիսում (Գորիս, Տաթեւ եւ Տեղ համայնքների համար), Թումանյանում եւ Ջերմուկում (Ջերմուկ, Գորայք համայնքների համար):

ԽՈՇՈՐԱՑՈՒՄԻՑ ԴԵՏՈ ՆՈՐ ԶԱՍՏԻՔՆԵՐ ԵՆ ԱՎԵԼԱՑԵԼ

Լոռու մարզի Թումանյան խոշորացված համայնքի Զարինջ բնակավայրում խոշորացումից հետո նոր հաստիքներ են ավելացել: Մասնավորապես, գյուղի մանկապարտեզը, ուր հաճախում են 28 երեխա, համալրվել է 1 դաստիարակով եւ 1 դայակով: Լորուտում նույնպես 1 դաստիարակ է ընդունվել աշխատանքի:

Թումանյան կատարած աշխատանքային այցի շրջանակում ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարության տեղական ինքնակառավարման վարչության պետ Աշոտ Գիլոյանը այցելել է Զարինջի մանկապարտեզ, ծանոթացել իրավիճակին, զրուցել աշխատակազմի հետ, իսկ երեխաներն էլ ներկայացրել են մանկապարտեզում ձեռք բերած իրենց ունակությունները:

Խոշորացումից հետո ԱՄՆ Միջազգային Չարգացման Գործակալության (USAID) «Աջակցություն տեղական ինքնակառավարման բարեփոխումներին» ծրագրի շրջանակներում Թումանյան միավորված համայնքին (Թումանյան, Մարց, Զարինջ, Լորուտ, Շամուտ, Աթան, Ահնիձոր) տրամադրվել է շուրջ 146 մլն դրամի տեսչական միջոցներ՝ մեկ աղբատար մեքենա, մեկ «Կամագ» մակնիշի բեռնատար մեքենա եւ մեկ բազմաֆունկցիոնալ էքսկավատոր: Ծրագրի իրականացման արդյունքում Թումանյան համայնքին կհատկացվի եւս 2 միկրոավտոբուս, որոնք կապահովեն համայնքի բնակավայրերի միջեւ տրանսպորտային կապը:

Համայնքի բոլոր բնակավայրերում կկառուցվեն նաեւ կանգառներ: Համայնքապետարանում ներդրվել է քաղաքացիների սպասարկման գրասենյակ (ԶՍԳ), որի միջոցով իրականացվում է բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների տրամադրումը: Գրասենյակները գործում են «Մեկ պատուհան, մեկ կանգառ» սկզբունքով՝ նպատակ ունենալով բնակչի համար ապահովել հարմարավետ եւ որակյալ սպասարկում:

Հարգելի ընթերցող,

Ի՞նչ եք մտածում ամեն անգամ «Համայնք-ՀամաՏեղ» թերթը բացելիս, ի՞նչ ակնկալիքներ ու սպասումներ ունեք, ինչի՞ մասին եք ցանկանում կարդալ, բայց չեք գտնում այստեղ: Թերթի մասին ձեր կարծիքը շատ կարեւոր է մեզ համար: Գրեք մեզ հետեւյալ հասցեով՝ Երեւան, Երվանդ Քոչարի 20, 4-րդ հարկ կամ madamyam@cofa-mail.am էլ. փոստին:

ԶԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՇՈՐԱՑՄԱՆ ՍՊԱՍՈՒՄՈՎ



Մայրաքաղաքին մոտ գտնվող բնակավայրերն ունեն մի շարք առավելություններ, բայց՝ ոչ խնդիրների լուծման առումով:

Արարատի մարզի երեւանամերձ համայնքներից է Գետափնյան, որը մայրաքաղաքի հետ կապող միակ տրանսպորտային միջոցը Մասիս-Երեւան երթուղու 457 համարի ավտոբուսն է:

Մտավորապես 1600 բնակիչ ունեցող այս համայնքում եւս հիմնական զբաղվածությունը հողագործությունն է, սակայն տարիներ ի վեր ոռոգման ջրի բացակայության պատճառով այսօր շատ հողակտորներ անմշակ են:

«Ոռոգման ջրի խնդիրը կարգավորվեց, սակայն մարդիկ երեւի հիասթափվել են, ու շատ հողեր այդպես էլ մնացին

անմշակ:

Այսօր էլ քայլեր ենք ձեռնարկում խմելու ջրի խնդրի լուծման ուղղությամբ, քանի որ ինչպես Մասիսի տարածաշրջանի շատ գյուղերում, մեզ մոտ եւս խմելու համար նախատեսված ջուրն օգտագործում ենք միայն կենցաղային նպատակներով, իսկ խմելու ջուրը գնում ենք»,- ներկայացնում է 2012 թվականից համայնքը ղեկավարող Մկրտիչ Ազատյանը: Վերջինս հավաստիացնում է, որ տարիների ընթացքում համայնքային միջոցներով կատարվել են մի շարք աշխատանքներ. բարեկարգվել է համայնքապետարանի հարակից պուրակը եւ տեղադրվել է խաչքար, նախորդ տարվա ընթացքում գազաֆիկացվել է համայնքի երկու փողոց, ասֆալ-

տապատվել է դեպի գերեզմանոց տանող ճանապարհը, շուտով կկառուցվի նաեւ ֆուտբոլի դաշտ:

Սակայն Գետափնյայի գերխնդիրները դեռեւս մնում են անլուծելի. համայնքը չունի մշակույթի կենտրոն, մանկապարտեզ, եւ որ ամենամտահոգիչն է՝ դպրոց, ու 250-260 դպրոցական ստիպված հաճախում են հարեւան համայնքների կամ մայրաքաղաքի դպրոցներ:

«Համայնքում դպրոց գործել է կոմունիստական տարիներին, այն էլ՝ տարրական, երբ միացյալ ենք եղել հարեւան Գեղանիստ համայնքի հետ, այնուհետեւ

դա էլ է փակվել, ու մինչեւ այսօր դպրոց չունենք: Հարցը բազմաթիվ անգամներ բարձրաձայնել ենք, կառուցման համար տեղը կա, բայց...»

Հուսանք, որ մի օր այս կարելորագույն ու մյուս հարցերը եւս կլուծվեն»,- ամփոփում է Մ. Ազատյանը:

Ի տարբերություն համայնքապետի, բնակիչների մասը, որոնք, բնականաբար, կարելորում են սեփական դպրոց ունենալը, առայժմ հարցի լուծման մեկ այլ տարբերակ են նշում. «Որքան էլ հարեւան համայնքները մոտ են, այդուհանդերձ, հատկապես ձմռանը շատ դժվար է դպրոց հասնելը, ու հույս ունենք, որ առաջիկայում նախատեսվող համայնքների միավորման արդյունքում, ըստ ամենայնի, կգործի միջհամայնքային տրանսպորտ ու մեր հոգսը մասամբ կթեթեւանա»:

Հ. ԶԵՐՈՐՅԱՆ



IX-XIII դարերի միջնադարյան քաղաքների ինքնավարության առնչվող հարցերը առավել համակողմանի ներկայացրել է ակադեմիկոս Բ.Առաքելյանը, հիմք ընդունելով հայ եւ օտար սկզբնաղբյուրներում, ինչպես եւ Ն. Մառի եւ Գ. Օրբելու Անիի պեղումների արդյունքների ամփոփումներում առկա տեղեկատվությունը: Այդ ուշագրավ անդրադարձը տեղ է գտել Բ. Առաքելյանի «Քաղաքները եւ արհեստները Հայաստանում IX-XIII դդ.» գրքում: Այն ընծեռում է հնարավորություն՝ կազմելու ամբողջական պատկերացում միջնադարյան քաղաքային ինքնավարության մասին: Բ.Առաքելյանի գրքում տեղ գտած «Քաղաքային վարչություն եւ ինքնավարություն» ուսումնասիրությունը, որպես համայնքային ինքնավարության խնդիր արծարծող բացառիկ ուսումնասիրություն, ստորեւ ներկայացվում է որոշակի կրճատումներով եւ առանց մեկնաբանությունների:

«Քաղաքային վարչություն եւ ինքնավարություն» (Բ. Առաքելյան)

«9 -10-րդ դարերում, երբ առաջացավ եւ ձեւավորվեց ֆեոդալական քաղաքը, այն դեռեւս ամբողջովին սեյրոյի վերաբերյալ էր կրում: Արաբական տիրապետության ժամանակ քաղաքները ձեւակաւորեւս համարվում էին պետական, սակայն դրանք իրականում տոկ գտնվում էին պետական իրավասության ներքո, բայց անմիջապես ենթակա էին պետության կողմից նշանակված ոստիկանին կամ ամիրային, որի իշխանության մեջ միավորված էին վարչական, ռազմական եւ տնտեսական ֆունկցիաները: Արաբները եւ քաղաքների հարկահանները եւ շուկայի վերահսկիչները: Քաղաքներում հաստատվեց նաեւ դատարանը, որի գլուխ կանգնած էր դահի: 9-10-րդ դարերում արաբական տիրապետության տապալումից հետո, երբ իր ժամանակի համար առավել բուռն թափով տեղի էր ունենում ֆեոդալական քաղաքի առաջնադարձում ու ձեւավորումը, քաղաքները, լինելով դրանք Բագրատունիների թե՛ Վասպուրականի թագավորությունների մեջ կամ Հայաստանի հարավի ամիրայություններում, համարյա բոլորն էլ խոշոր ֆեոդալների նստավայր էին եւ կառավարվում էին նրանց կողմից՝ ունենալով միանգամայն բնորոշ սեյրոյի կարգեր:

Բագրատունիները ու Արծրունիները քաղաքներում նշանակում էին թագավորական տան իշխաններից մեկին, որը դառնում էր տվյալ քաղաքի տերը եւ ենթակա էր միայն թագավորին: Քաղաքների վարչական, ռազմական եւ տնտեսական իշխանությունը կենտրոնացած էր սեյրոյների ձեռքին, միայն դատական իշխանությունն էր գտնվում հոգեւորականության ձեռքում, որի վրա սեյրոյը ուներ վերահսկողության իրավունք:

Կայսրությունը բյուզանդական տիրապետությանը ենթակա Արեւմտյան Հայաստանում նշանակում էր կառավարիչներ, որոնք աշտոնվում էին վարչական, զինվորական եւ տնտեսական լիազորություններով:

Քաղաքների գարգացման, եկամտաբեր հարստությունների առաջացմանը համընթաց այստեղ են կենտրոնանում զգալի թվով աշխարհիկ ֆեոդալներ եւ բարձր հոգեւորականություն: Սակայն աստիճանաբար ավելի ու ավելի են ստվարանում վաճառականների, վաշխառուների վարչական ու տնտեսական գանազան պաշտոններ վարող անձանցից բաղկացած քաղա-

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԱԿԱՐՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

«Համայնք-ՀամաՏեղ» ամսաթերթը շարունակում է իր ընթերցողին ներկայացնել տեղական ինքնակառավարման՝ հայկական մոդելների մասին՝ Արեւիկ Հարությունյանի «Պանկուից մեր օրերը» եզակի աշխատության ուշագրավ էջերը:

քային վերնախավի շարքերը: Շատ ավելի բազմամարդ էին քաղաքի ստորին խավերը, որոնք բաղկացած էին արհեստավորներից, մանր առեւտրականներից, քաղաքի երկրագործ բնակչությունից, ծառաներից, փախստական ճորտերից, քաղաքային «ամբոխից»: Քաղաքի ստորին խավերի աճը տեղի էր ունենում ավելի արագ եւ առավել մեծ չափերով:



Բագրատունիների օրոք կառուցված Տիգրանի ամրոցը (IX դար, Գյումրի-Կարս ճանապարհին)

10-րդ դարի երկրորդ կեսին արդեն ֆեոդալական քաղաքն ստանում է իր բնորոշ եւ ցայտուն կերպով արտահայտված դասային կազմը, սրվում է շահերի բախումը, որը երեւան էր գալիս ոչ միայն տարբեր դասակարգերի ու դասերի միջեւ, այլեւ միեւնոյն դասի ներսում: Տեւական այս պայքարի հետեւանքով սեյրոյի անբաժան իշխանությունը քաղաքներում սկսում է առաջին ճեղքերը տալ, սահմանափակվել քաղաքային, այս կամ այն չափով կողեզիալ իշխանությունների երեւան գալով եւ աստիճանաբար խախտվում է: Ահա այս եղանակով դեռեւս սեյրոյի քաղաքում սաղմնավորվում է քաղաքային ինքնավարությունը:

Քաղաքային ինքնավարությունը միանգամից գոյանալ չէր կարող: Սեյրոյի քաղաքում կյանքը մշտապես ավելի ու ավելի բարդ կերպարանք էր ստանում, եւ սեյրոյն իր պաշտոնականերով ի վիճակի չէր ընդգրկելու քաղաքային կյանքի բոլոր կողմերը, իսկ բնակչության, մանավանդ վերնախավի տնտեսական դերի հարաբերումը աճող պայմանավորում է նրանց մասնակցության անխուսափելիությունը քաղաքի տնտեսական, այլեւ վարչական կառավարման մեջ:

Այս պայմաններում սեյրոյը մասամբ շահագրգռված էր, բայց ավելի անխուսափելի անհրաժեշտությունը տեղի տալով՝ հարկադրված էր քաղաքի կառավարման մեջ ներգրավել ֆեոդալական ավագանու եւ մեծատունների ներկայացուցիչներին, որոնց ձեռքին հետզհետե փաստորեն կենտրոնանում էին եկամտի աղբյուրները եւ առհասարակ տնտեսական կյանքի որոշ բնագավառներ: Դեռեւս սեյրոյի կարգերի պայմաններում քաղաքի կառավարման մեջ քաղաքային բնակչության, իշխող վերնախավի ներկայացուցիչների մասնակցությունը՝ քաղաքային ինքնավարության առաջացման ճանապարհին կատարվող

առաջին քայլն էր: Դա Հայաստանում կատարվել էր արդեն 10-րդ դարում:

Ինչպես ուրիշ երկրներում, Հայաստանում եւս քաղաքային ինքնավարության զարգացման երկրորդ քայլը կամ աստիճանը եղավ սեյրոյի իշխանության առկայության պայմաններում եւ նրա կողքին քաղաքային վերնախավերի ներկայացուցիչներից կազմվող վարչության առաջացումը:

Արդյո՞ք քաղաքային ինքնավարությունը միջնադարյան Հայաստանում Բագրատունիների ժամանակ կամ նրանցից հետո՝ 12-13-րդ դարերում որեւէ ձեւով իր սեւորումներն ունեցել է:

Հարցի պատասխանը գտնում ենք 11-13-րդ դարերի աղբյուրներում: Պարզվում է, որ քաղաքներն ունեին ամբողջ քաղաքի եւ նրա բնակչությանը վերաբերող առավել կարեւոր հարցերը տնօրինող խորհուրդ, որը բաղկացած էր քաղաքի մեծամեծերից: 1045թ., երբ Կոստանդին Մոնոմախ կայսրը խաբեությունը Գագիկ Բ-ին իր մոտ կանչեց եւ կալանավորեց Կոստանդնու-



Գուրգեն եւ Սմբատ Բագրատունիների հարթաքանդակը Հաղպատի վանքի պատին

պոլսում, Անիի ավագանու խորհուրդը քննարկեց ստեղծված դրությունը եւ կամեցավ լուծել մայրաքաղաքի բախտը:

Անիում Գագիկաշեն տաճարի պեղումների ժամանակ հայտնաբերված քարերի վրա եղել են վատ պահպանված արձանագրության մնացորդներ, սակայն Գ. Օրբելուն հաջողվել է կարդալ «Գլխաւորք քաղաքիս պահենս» արտահայտությունը:

Ստեփանոս Պրեռյանի մի վկայությունից երեւում է, որ ավագների խորհուրդ կար Նախճավանում:

Քաղաքներում 10-13-րդ դարերում գոյություն ուներ ավագների խորհուրդ, որը կազմված էր ի «ծերոց քաղաքին» կամ «յաւագաց քաղաքին», այսինքն քաղաքի մեծամեծերից, որոնք աղբյուրներում կոչվում են «գլխաւորք քաղաքին»: Սա քաղաքային վարչության կոլեգիալ մարմին էր: Ավագների խորհուրդը՝ «գլխաւորք քաղաքին», լուծում էր քաղաքի կյանքին վերաբերող առավել կարեւոր հարցերը: Այն է, թե ո՞ւմ իշխանությունը պետք է ենթարկվեր քաղաքը, ի՞նչ չափով, եւ ի՞նչ հարկեր պետք է վճարեին բնակիչները եւ քաղաքի տարբեր դասերը: Հետեւապես, Անի ուներ որոշ օրենսդրական իշխանություն, ինչպես եւ դատական իրավասություն:

Սակայն այս ամենով հանդերձ քաղաքային ինքնավարության այս մարմինը ենթակա էր ֆեոդալ սեյրոյին: Քաղաքների ավագանու այս խորհուրդի մեջ 13-րդ դարերում մտնում էին քաղաքի ամիրան կամ քաղաքապետը, եպիսկոպոսը կամ դադին, իսկ խառը բնակչություն ունեցող քաղաքներում՝ թե՛ մեկը եւ թե՛ մյուսը, այլեւ խոշոր պաշտոնյաներ, ֆեոդալների եւ մեծատունների ներկայացուցիչներ, նաեւ տանուտերերը (քաղաքային թաղապետեր): Բյուզանդական կայսրությունը Անիի տանուտերերին (թաղապետերին) շնորհել էր տիտղոսներ, որովհետեւ քաղաքային վարչության մեջ նրանք զգալի դեր էին խաղում: Քաղաքային ինքնավարության մարմին մեջ մտնում էին թերեւս նաեւ այլ ազգի բնակչության ռայիսներ եւ քաղաքային արհեստավորական եղբայրությունների «ատյան ծերոց» կոչվող համաքաղաքային խորհրդի ներկայացուցիչները:

Քաղաքային վարչության «Գլխաւորք քաղաքին» կոչվող մարմին գլուխ կանգնած էր քաղաքապետը, որն աղբյուրներում երեւան է գալիս «քաղաքապետ», «ամիրա քաղաքին» անունների տակ: 9-11-րդ դարերում շատ քաղաքներ իրենց գավառով դարձել էին առանձին ամիրայություններ, եւ ամիրան միաժամանակ գավառապետ, այսինքն պարզապես ֆեոդալ սեյրոյ էր: Բյուզանդական կայսրության մեջ քաղաքապետ ու գավառապետ նշանակվում էին իշխանները կամ զորավարները:

Քաղաքային ինքնավարության զարգացման հետագա քայլերը եղան քաղաքային աշխարհագրի, աշխարհիկ դատարանի եւ օրենսդրության առաջացումը, քաղաքային բնակչության դերի աճը, հասարակական ժողովների գումարումը եւ այլն:

13-րդ դարերում քաղաքներում գոյացած աշխարհիկ դատական ատյանի գլուխ կանգնած էին լինում աշխարհիկ մարդիկ: Դատարանն ուներ մշակված սկզբունքներ եւ որոշակի կազմ: Մխիթար Գոշի «Դատաստանագրքից» իմանում ենք, որ դատարանի կազմի մեջ մտնում էին դատավորը, երկու դատախազ՝ մեկը մեղադրող, մյուսը՝ պաշտպանող եւ երեք վկա: Առանց վկաների երդումով դատելը Գոշը հանձնարարելի չի համարում: Վճիռը կայացվում էր ոսոխների՝ հայցվորի եւ մեղադրյալի ներկայությամբ: Եղել են նաեւ վարձու առեւտրականներ:

Միջնադարյան դատարանը, իհարկե, ամբողջովին ծառայում էր իշխող դասերի շահերին, սակայն քաղաքային կյանքի զարգացմանը համընթաց հաշվի էին առնում նաեւ քաղաքային վերնախավի շահերը, եւ մասամբ սահման էր դրվում իշխողների կամայականություններին՝ ստորին խավերի նկատմամբ:

Ըստ «Պանկուից մեր օրերը» գրքի Հատվածները տպագրվում են հեղինակի համաձայնությամբ:



«ՀԱՄԱՅՆՔ-ՀԱՄԱՏԵՂ» ամսաթերթը
Լրատվական գործունեություն
իրականացնող՝ «Համայնքների
ֆինանսիստների միավորում» ՀԿ
Գրասենյակ՝
թիվ 034063471,
տրված՝ 06. 02. 2004 թ.

Թերթը հրատարակվում է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային գարգացման գործակալության օժանդակությամբ իրականացվող «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» (ՀամաՏեղ) ծրագրի շրջանակներում: Այստեղ արտահայտված տեսակետները միմյանի հեղինակներին են եւ պարտադիր չեն, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

ԽՐԵԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
ՎԱՀԱՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ
ՎԱՀՐԱՄ ԸՆԴՅԱՆ
ԱԲՐԱՀԱՄ ԱՐՏԱՇԵՍՅԱՆ
ՆՎԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԲՈՐԻՍ ՆԱԿԱՍՏՆՆՅԱՆ
ՅՈՒՐԻՍԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ԴԱՎԻԹ ՄԱՐԳԱՐՅԱՆ
ԵՆԱՐԻԿ ԱՅՎԱԶՆՅԱՆ
ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Թողարկման պատասխանատու՝
Խմբագիր
ԱՐԵՎԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Մեր հասցեն՝
Երեւան, Երվանդ Բոջարի 20,
4-րդ հարկ
Հեռախոս՝ 011 5313 97, 011 5313 98
Էլ. փոստ՝ info@cfoc.am
Կայք՝ http://cfoc.am/

Տպագրված է «Տիգրան Մեծ»
հրատարակչության տպարանում,
Ք.Երեւան, Արշակունյաց պող. 2
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ,
տպաքանակը՝ 2000 օրինակ:
Թերթը տարածվում է անվճար: